Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 28 -ի N 444 - Ն
որոշման

ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԿԱՄ ԶՈՐԱԿՈՉԻ ՏԱՐԿԵՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՎ ԿՈՉՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են փրկարարական ծառայության միջին և կրտսեր խմբերի պաշտոններում սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ զորակոչի տարկետման իրավունքից օգտվող և կոչում չունեցող քաղաքացիներին պաշտոնի նշանակելու հետ կապված հարաբերությունները:

2. Փրկարարական ծառայության միջին և կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ զորակոչի տարկետման իրավունքից օգտվող և կոչում չունեցող այն քաղաքացիները, ովքեր բավարարում են «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի պահանջները և նշված պայմանները՝

1) բժշկական հանձնաժողովի կողմից շարային ծառայության պիտանիության ճանաչում.

2) զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի առկայություն՝ շարային ծառայության մասին ռազմական բժշկական հանձնաժողովի դրական եզրակացությամբ:

3. Սույն հավելվածի 2-րդ կետում նշված պայմանները բավարարելու դեպքում քաղաքացին պաշտոնի կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ուսումնական հաստատությունում եռամսյա վերապատրաստում անցնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ